Գ. ՂԱՐԱՋՅԱՆԻ ՏՆՏԵՍԱԴԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Մ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գևորգ Հարությունի Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ[1]) պատկանում է հայ հեղափոխականների ավագագույն սերնդին։ Նա ծնվել է 1861 թ., Թիֆլիսում։ Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Ժնևի համալսարանի հասարակական գիտությունների բաժինը։

Արտասահմանում ուսանելու տարիներին Գ. Ղարաջյանը ծանոթանում է «Աշխատանքի ազատագրություն» խմբի անդամների, ինչպես նաև ռուս ու գերմանացի մի շարք վտարանդի հեղափոխականների հետ, որոնց օգնությամբ ձեռք է բերում և ուսումնասիրում անլեգալ գրականություն։ Մոնպելյե քաղաքում 1886 թ. ամռանը Գ. Ղարաջյանը ձեռք է բերում Կ. Մարքսի «Կապիտալի» առաջին հատորի ֆրանսերեն հրատարակությունը։ Այդ գրքի ընթերցումն «այն տպավորություն ունեցավ ինձ վրա,— գրում է նա,— ինչպիսի ազդեցություն կարող էր ունենալ կույրի վրա մի տեսակ հրաշքով նրա աչքերի բացումը»[2]։

Ժնևի համալսարանի հինգ տարվա դասընթացը Գ. Ղարաջյանն ավարտեց երեք տարում և ստացավ սոցիալական գիտությունների պրիվատ-դոցենտի պսակագիր։ Ուսանողական տարիների իր գլխավոր նվաճումը, սակայն, Գ. Ղարաջյանը համարում է մարքսիստական գաղափարախոսության ըմբռնումը։

Սոցիալ-դեմոկրատական ընդհատակյա աշխատանքներին մասնակցելու համար Գ. Ղարաջյանը 1902 թ. Թիֆլիսում բանտարկվում է։ Այնուհետև մինչև 1904 թ. նա գտնվում էր աքսորում՝ Ենիսեյի նահանգում, որտեղից վերադառնալուց հետո աշխատում է Ստ. Շահումյանի հիմնադրած «Կայծ» թերթում՝ որպես պատասխանատու քարտուղար և խմբագրական կոլեգիայի անդամ։ Շուտով նա նորից է բանտարկվում, իսկ ազատվելուց հետո՝ 1907 թ., Հայկ Ազատյանի հետ խմբագրում է սոցիալ-դեմոկրատական «Շավիղ» թերթը։

Հետագա ձերբակալություններից խուսափելու նպատակով Գ. Ղարաջյանը 1908 թ. հեռանում է Ռուսաստանից և, իբրև քաղաքական վտարանդի, ապաստանում Շվեյցարիայում։ Այդ տարիներին նա Ժնևի համալսարանում դասախոսում է «Ընդհանուր քաղաքական պատմություն» և «Ռուսաստանի քաղաքական-հեղափոխական զարգացման պատմություն» առարկաները։

1910 թ. Ժնևում ռուսերեն լույս տեսավ Գ. Ղարաջյանի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» աշխատությունը, որը միանգամից լայն հռչակ բերեց հեղինակին։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ ՌՍԴԲԿ Կենտրոնական կոմիտեն գնեց այդ գրքի 2000 օրինակ՝ սոցիալ-դեմոկ-

---

1 Ս. Տ. Արկոմեդ ծածկանունը տառերի հակառակ դասավորությամբ կարդացվում է՝ Ս. Դեմոկրատ։

2 ՍՄԿԿ ԿԿ կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 51, ց. 1, ֆ. 90, թ. 42։

բատական կազմակերպություններին ուղարկելու համար Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում այդ աշխատությունը և գտնում, որ այն «արժանի է ամենալայն տարածման»[3]։ Հետագայում Վ. Ի. Լենինը բազմիցս անդրադարձել է Գ. Ղարաջյանի վերոհիշյալ աշխատությանը։ Լիկվիդատորների հայացքները մերկացնելու նպատակով նա անհրաժեշտ էր համարում օգտագործել նաև Գ. Ղարաջյանի աշխատության փաստական հարուստ նյութը, ինչպես և նրա գրքի վերաբերյալ մենշևիկյան գրախոսականները[4]։

Գ. Ղարաջյանի աշխատությանը գրած առաջաբանում Գ. Վ. Պլեխանովը նշում է, որ այդ գիրքը «ընթերցողների հիշողության մեջ վերականգնում է այնպիսի փաստեր, այնպիսի գաղափարներ և պայքարի այնպիսի եղանակներ, որոնց շնորհիվ հատկապես պարզ է դառնում «լիկվիդատորական» դատողությունների ամոթալի անհեթեթությունը... Ընկ. Ս. Տ. Արկոմեդի գիրքը ընթերցողների հիշողության մեջ վերակենդանացնում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի լավագույն ավանդույթները։ Դա բավական է այն բանի համար, որպեսզի ամբողջ հոգով գրքին ցանկանալ հաջողություն»[5]։

1915 թ. Շվեյցարիայում ֆրանսերեն լույս տեսավ Գ. Ղարաջյանի «Ներկա պատերազմը և սոցիալիզմը» պատմա-քննական աշխատությունը, որը սոցիալ-ինտերնացիոնալիստական մամուլում ընդունվեց մեծ գոհունակությամբ։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո վերադառնալով Թիֆլիս, Գ. Ղարաջյանը խմբագրում էր բոլշևիկների և մենշևիկ-ինտերնացիոնալիստների կողմից հիմնադրված «Պայքար» թերթը։

Դեռևս ուսանողական տարիներից արտասահմանում մտերմական հարաբերությունների մեջ լինելով Գ. Վ. Պլեխանովի հետ, Գ. Ղարաջյանը կրում էր նրա գաղափարական ազդեցությունը և նրա հետ միասին աստիճանաբար գլորվում օպորտունիզմի ճահիճը։ Պատահական չէ, որ ՌՍԴԲԿ պառակտումից հետո Գ. Ղարաջյանը հայտնվեց մենշևիկյան ֆրակցիայում։ Այդ գործում, անշուշտ, պակաս դեր չխաղաց նրա կտրվածությունը ռուսական կոնկրետ իրականությունից։

Գ. Ղարաջյանն ապրում էր գաղափարական ճգնաժամ, բայց կարողացավ շուտով ըմբռնել իր սխալը։ Նա 1918 թ. դուրս եկավ Չխենկելու կողմից գլխավորվող սոցիալ-դեմոկրատական կոմիտեի անդամությունից ու փոխնախագահությունից, ապա նաև մենշևիկյան ֆրակցիայից՝ իր հրաժարականը պատճառաբանելով չխենկելիզմի հակասոցիալիստական տակտիկայի հետ հաշտվելու անհնարինությամբ[6]։

Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումից հետո Ղարաջյանն աշխատել է որպես Վրաստանի հեղափոխության թանգարանի վարիչ, Երևանի պետական համալսարանի սովետական շինարարության ֆակուլտետի դեկան և սոցիալիզմի պատմության դասախոս, Հայաստանի հեղափոխության թանգարանի վարիչ, Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի դա-

---

[3] «Социал-демократ», 30. VIII. 1910.

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 189, 280։

[5] С. Т. Аркомед, Рабочее движение и социал-демократия на Кавказе, М—П., 1923, стр. 22, 32

[6] С. Т. Аркомед, նշվ. աշխ., էջ 13, С. Т Аркомед, Материалы по истории отпадения Закавказья от России Тифлис, 1923, стр. 7

սախոս և այլն։ Այդ տարիներին տպագրվեցին նրա մի շարք պատմա-հուշագրական բնույթի աշխատությունները, հոդվածներն ու պիեսները, վերահրատարակվեցին նախահեղափոխական շրջանի նրա առանձին գործերը։

Իր աշխատություններում Գ. Ղարաջյանն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասի տնտեսական զարգացման, բանվորական շարժման առաջին բայլերի և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ծագման ու ձևավորման մասին։ Քաղաքական ասպարեզ մտնելով Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման արշալույսին, Ղարաջյանն այն ժամանակվանից սկսած գիտականորեն վերլուծում էր երկրամասի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների բնույթը, դասակարգերի փոխհարաբերությունները, նյութական բարիքների արտադրության, բաշխման և բաղմաթիվ այլ հարցեր՝ հաճախ համեմատություններ կատարելով Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի հետ։ Գ. Ղարաջյանի գրական հարուստ ժառանգությունը հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ ներկայացնում է նշանակալի արժեք։ «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» աշխատության թույլ կողմերը նշելով հանդերձ, Ասքանազ Մռավյանը գրում է. «Ունենալով փաստական հետաքրքիր տվյալներ և լինելով առաջին դիրքը Անդրկովկասի բանվորական շարժման մասին, ընկ. Ղարաջյանի աշխատասիրությունն արժանի է համակրական ուշադրության»[7]։

Անցյալ դարի 70—80-ական թվականները Գ. Ղարաջյանը բնութագրում է որպես Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական անցման շրջան, երբ «երկրի մեջ,—գրում է նա,—սկսում է գործառնության մեջ մտնել (функционировать) նախ՝ առևտրական կապիտալը, ապա նաև, սահմանափակ շրջաններում՝ արդյունաբերական կապիտալը. գերիշխողը, սակայն, դեռևս առևտրա-վաշխառուական կապիտալն է այդ շրջանում, որը շահագործող ավերիչ ձևերով ծայրահեղ աղքատացման է ենթարկում ժողովրդական մասսաներին»[8]։

Գ. Ղարաջյանը ցույց է տալիս, որ առևտուրը՝ իր ասիական ձևերով և արհեստագործությունը՝ իր պարզունակ գործիքներով կազմում էին Անդրկովկասի այն ժամանակվա քաղաքային տնտեսության հիմքերը։ Կովկասյան քաղաքների հասարակական տնտեսության տիպական ներկայացուցիչները համքարներն ու առևտրական քաղքենիներն էին։ Վաճառականության գոյությունը Ղարաջյանը համարում էր հայ աշխատավորի սնանկության պատճառներից մեկը։ Իհարկե, ժողովրդին խաբելով վաճառականը շահ է ստանում, նշում էր նա։ Սակայն «մասնավոր անհատների հարստությունը մեզ չի հետաքրքրում, այդ հարստությունը տևական չէ, այսօր մեկի ձեռքին է, վաղը ուրիշի ձեռքը կանցնի։ Բայց վաճառականն է գլխավորապես միջնորդ մեր և ուրիշ երկրների մեջ, թե նա ակամա դառնում է սպառող մեր նյութական ուժերի՝ նման։ բաց խողովակով մի ավազանի, որ մի տեղից ջուր չընդունելով, վերջ ի վերջո պիտի դատարկվի, ցամաքի»[9]։

Վիճակն ավելի անմխիթարական էր գյուղում, որտեղ տիրում էր բնատնտեսություն՝ նահապետական կենցաղի սովորություններով հանդերձ։

---

7 «Նորք», գիրք 3, 1923, էջ 300։

8 Գ. Ղարաջյան, Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 7։

9 «Մշակ», 1886, № 71։

Սակայն Անդրկովկասը ևս չէր կարող խուսափել զարգացման կապիտալիստական ուղուց։ Գ. Ղարաջյանը նկատում է, որ արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ երկիրը «հետզհետե մտնում է հասարակական-արդյունաբերական ավելի ծավալուն, եռուն հարաբերությունների շրջանը»[10]։ Անդրկովկասի քաղաքային տնտեսության աճին, առևտրական և արդյունաբերական կապիտալների աշխուժացմանը մեծ չափով նպաստում էր երկաթուղին։

Կապիտալիզմի զարգացման համար Անդրկովկասում գոյություն ունեին օբյեկտիվ պայմաններ։ Այդ տեսակետից Գ. Ղարաջյանն առաջին հերթին նրկատի ուներ երկրամասի բնական հարստությունները. «Արդյունաբերության ինչ տեսակ ճյուղեր ասես մեզ մոտ կարելի է զարգացնել,— գրում էր նա 1886 թ.,— մեր ժողովրդին անկյալ դրությունից հանելու միակ ճանապարհը արդյունագործության զարգացումն է։ Եթե չենք կարող, այնքան ուժ չունենք առայժմ, որ մեր երկրում զարգացնենք գործարանային կյանքը, գոնե մշակենք հում նյութեր, որոնց մեր երկիրը հարուստ արտադրող է... Գոնե առայժմ այս սկզբունքով ղեկավարվելով կպահպանենք տնտեսական հավասարակշռությունը մեր և ուրիշ երկրների միջև»[11]։

Մյուս պայմանը, առանց որի կապիտալիզմը չէր կարող զարգանալ, հողատիրության ձևն էր։ Գ. Ղարաջյանը գտնում էր, որ եթե Կովկասի հողային մեծ կալվածքներում ներդրվեին համապատասխան կապիտալներ, ապա «բնականորեն սկիզբ կդրվեր խոշոր արդյունագործության, որը և կզարկեր խոշոր դրամատիրության հաղթանակի ժամը մեր երկրում»[12]։

Արդյունաբերական կապիտալիզմի զարգացման գործում Անդրկովկասում գլխավոր դերը պատկանում է Բաքվին։ Գ. Ղարաջյանը հիշում է, որ դեռևս XIX դ. վերջին քառորդում «մեծ հոսանք էր սկսվել գյուղերից և քաղաքներից դեպի այդ քաղաքը. քաղաքներից փոքրիշատե փողավոր մարդիկ՝ և՛ վաճառականներ, և՛ արհեստավորներ, գյուղերից՝ աղքատացած գյուղացիներ... գնում էին հաստատվելու Բաքվում. վաճառականները և փողավոր մարդիկ իրանց կապիտալը աճեցնել-կուտակելու, իսկ աղքատացած գյուղացիները և արհեստավորները վարձու աշխատանք գտնելու համար»[13]։ Առաջինները խտացնում էին բուրժուազիայի շարքերը, իսկ վերջինները՝ պրոլետարիատի։

Ուշագրավ է Գ. Ղարաջյանի վերաբերմունքը մանրբուրժուական սոցիալիզմի գաղափարախոսության նկատմամբ։ Հայտնի է, որ նարոդնիկներն ամեն կերպ փորձում էին ժխտել, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման փաստը։ Նրանք պնդում էին, թե երկրամասը բացառապես երկրագործական է, իսկ Բաքվի նավթը վաղ թե ուշ կարող է սպառվել, որով կապիտալիզմի զարգացման կողմնակիցների հույսերը հօդս կցնդեն։ Դեռևս 1898 թ. քննադատելով նման տեսակետը, Գ. Ղարաջյանը գրում էր. «Կապիտալիստական ձևերի զարգացման հակառակորդների վերաբերյալ չի կարելի չհայտնել հետևյալը. նրանք իդիլիական հայացքների գերի ստրուկներ են, գիտեն, որ խոշոր արդյունագործությունը, մաշինիզմը իրանց «նվիրական» հնավանդ կարգերն ու հայացքները հիմն ի վեր պետք է տապա-

10 Գ. Ղարաջյան, նշվ. աշխ., էջ 8։
11 «Մշակ», 1886, № 71։
12 Գևորգ Ղարաջ, Ուր է գնում մեր երկիրը («Տարազ», 1898, № 46)։
13 ՍՄԿԿ կԿ կից ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 51, ց. 1, 93, թ. 89—90։

չև, ահա թե ինչու սոսկումն է պատճառում նրանց կապիտալիզմը»[14]։ Ինչպես երևում է, այս միտքը Գ. Ղարաջյանը քաղել է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» աշխատությունից, որի հայերեն թարգմանությանը նա ձեռնամուխ էր եղել դեռևս 1887 թ.։ «Մանիֆեստում» այդ կապակցությամբ ասված է. «Մրցությունն այս դասակարգի անդամներին (մանր բուրժուազիայի— Մ. Գ.) մշտապես նետում է պրոլետարիատի շարքերը, և նրանք սկսում են տեսնել այն մոմենտի մերձեցումը, երբ իրենք խոշոր արդյունաբերության զարգացման հետ միասին բոլորովին կանհետանան իբրև ժամանակակից հասարակության ինքնուրույն մաս և առևտրի, մանուֆակտուրայի ու երկրագործության մեջ կփոխարինվեն վերակացուներով ու ծառայողներով»։ Ահա թե ինչու մանրբուրժուական սոցիալիզմը ցանկանում է «կամ վերականգնել արտադրության և հաղորդակցության հին միջոցները, իսկ դրանց հետ միասին նաև հին գույքային հարաբերություններն ու հին հասարակությունը. կամ ցանկանում է արտադրության և հաղորդակցության ժամանակակից միջոցները բռնությամբ դարձյալ խոթել հին գույքային հարաբերությունների շրջանակների մեջ»[15]։

Հայ նարոդնիկները գյուղացիներին պրոպագանդում էին պահպանել իրենց հին, նահապետական օջախի սրբությունը, չքել գյուղը։ Սակայն, ինչպես նկատում է Գ. Ղարաջյանը, գյուղացիները զանգվածներով գնում էին դեպի քաղաքները։ Ղարաբաղի լեռնային շրջաններում, Զանգեզուրում, Վրաստանի Օղուրգետի շրջանում և այլուր եղան գյուղեր, որ գրեթե անմարդաբնակ դարձան։ Դրա պատճառը Գ. Ղարաջյանը համարում էր այն, որ հողագործական պարզունակ աշխատանքը գյուղացու ընտանիքի անդամների կերակրման համար դարձել էր անբավարար աղբյուր։ Քաղաքային արդյունաբերության մեջ գյուղացին տեսնում էր իր ընտանիքի գոյությունը մի կերպ պահպանելու միակ հնարավորությունը։

Իհարկե, Գ. Ղարաջյանը չէր պնդում, թե արդեն XIX դ. վերջին Անդրկովկասում հաստատապես տիրապետում է կապիտալիզմը։ Ակնհայտ էր միայն, որ երկրամասում արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ համապատասխան փոփոխություններ էին տեղի ունենում նաև արտադրական հարաբերությունների մեջ։ Այսպես, «կապիտալիզմի զարգացումով,— գրում է Գ. Ղարաջյանը,— առաջ է գալիս հասարակության բաժանումն երկու որոշ դասակարգերի. մի դասակարգ, որ ունեցողն է դրամի և արդյունագործության բոլոր միջոցների, որոնց շնորհիվ և նա շահագործում է այլոց աշխատանքը, մյուս դասակարգը, որը զուրկ է աշխատանքի բոլոր միջոցներից, իր ֆիզիկական և մտավոր աշխատանքով արդյունավորում է կապիտալը դրամատիրոջ օգտին։ Կապիտալիստ և աշխատավոր, ահա դասակարգային իշխող տիպերը հասարակության մեջ, որոնք հանդես են գալիս դեմ-հանդիման կապիտալիզմի իբր հարազատ ծնունդներ։ Մյուս դասակարգերը ետ են քաշվում, թուլանում են և չդիմանալով ոչնչանում են ժամանակի ընթացքում»[16]։ Գ. Ղարաջյանի այս եզրակացությունը ևս մարքսիստական էր. «Բոլոր դասակարգերից, որոնք այսօր բուրժուազիայի դեմն են կանգնած, միայն պրոլետարիատն է

---

14 Գ. Ղարաջ, նշվ. աշխ., էջ 1063։

15 Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, էջ 77, 78։

16 Գ. Ղարաջ, նշվ. աշխ., էջ 1039—1040։

իրենից իրապես հեղափոխական դասակարգ ներկայացնում։ Մյուս բոլոր դասակարգերը խոշոր արդյունաբերության զարգացման հետևանքով քայքայվում են և ոչնչանում»[17]։

Լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսները ձևացնում էին, թե, իբր, իրենք կարեկցում են պրոլետարիատին։ Նրանք պրոլետարիատին համարում էին թշվառ ու տարաբախտ, տգետ ու խավար, խղճահարության, օգնության ու բարեգործության կարոտ մի դաս։ Դրան հակառակ, Գ. Ղարաջյանը պրոլետարիատին իրավամբ բնութագրում էր որպես դասակարգային հասարակության «ամենաառաջադիմական տարր» և նրանով որոշում «աղգերի քաղաքական ու տնտեսական հասունության միակ մասշտաբը»[18]։

Ընդգծելով քաղաքակրթության զարգացման ասպարեզում կապիտալիզմի հսկայական գերը, Գ. Ղարաջյանը միևնույն ժամանակ խիստ քննադատության էր ենթարկում լեգալ մարքսիստներին, որոնք փորձում էին գունազարդել կապիտալիստական հասարակությունն ու քողարկել նրա հակասությունները։ Գ. Ղարաջյանը տեսնում էր, որ այնտեղ, որտեղ մոտք է գործել կապիտալիզմը, իր հետ բերել է բանվոր դասակարգի խրոնիկական տանջանք, թշվառություն, ընչազրկություն, գերարտադրության պարբերական ճգնաժամեր և այլ անխուսափելի չարիքներ[19]։ Սակայն XIX դ. վերջում Ղարաջյանը դեռևս չէր դնում կապիտալիզմի հեղափոխական տապալման խնդիրը։ Նա գտնում էր, որ առայժմ պետք է միայն օգտվել կապիտալիզմի «քաղաքակրթական առողջ պտուղներից»։ «Թերևս գա կլինի պահպանողական քաղաքականություն,— ավելացնում էր նա,— բայց մենք ստիպված ենք դիմելու դրան, որովհետև հասարակության տնտեսության զանազան ձևերի մեջ խոշոր տնտեսության, մեքենական խոշոր արդյունագործության սիստեմը, իբր արդյունք գիտության և մարդկային ստեղծագործ հանճարի, ստեղծում է, կազմակերպում հասարակական հավաքական աշխատանքը, իսպառ հանելով անհատին իր մեկուսացած, հակաընկերական վիճակից։ Իսկ մաշինիզմը, տնտեսության խոշոր, յայն սիստեմը հնարավոր կարող է լինել ներկա հասարակական, տնտեսական պայմաններում միայն ևթ կապիտալիզմի շնորհիվ»[20]։

Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման հարցերն ուսումնասիրելու համար Գ. Ղարաջյանն առաջարկում էր. 1) Նկատի ունենալով վիճակագրության համարյա իսպառ բացակայությունը, կենտրոնների և լեռնահանքային ձեռնարկություններում ու արհեստանոցներում աշխատող բանվորների թվի վերաբերյալ հավաքել համապատասխան տվյալներ, 2) դիտել բանվորների թվի տարեկան աճը, 3) հատուկ ուսումնասիրության առարկա դարձնել բանվոր դասակարգի դրությունը, նիստուկացը, աշխատավարձը, աշխատանքային օրվա տևողությունը, աշխատանքի պայմանները, կապիտալիստների ու բանվորների փոխհարաբերությունները և այլն, 4) հետաղոտել գյուղական աղգաբնակչության տնտեսական դրությունը, հողային և ջրաբաշխման հարցերը, հողատիրության ձևերը, գյուղում կապիտալիստական շահագործման երևույթները, վաշխառությունը, դեպի քաղաքներ տեղի ունեցող գաղթը և այլն։

---

17 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, էջ 57։
18 Գ. Ղարաջ., նշվ. աշխ., էջ 1064։
19 Նույն տեղում, էջ 1063։
20 Նույն տեղում։

Նման ուսումնասիրությունները Գ. Ղարաջյանը ինքնանպատակ չէր համարում։ Ընդհակառակը, «թեորետիկական ծանոթությունը խնդրի հետ,— գրում էր նա,— ոչ մի կասկած չի կարող լինել, կունենա նաև իր գործնական հետևանքները. դիտելով կապիտալիզմի զարգացման ընթացքը և լավ ճանաչելով սրա ծնունդ բանվոր դասակարգի դրությունը, կարիքները և պահանջները, բնականորեն գործնական հողի վրա, այդ կարիքներին ու պահանջներին բավարարություն տալու, աշխատող մարդու թշվառությունն ամոքելու գործում, կհետևեր դրական և խելացի միջոցների գործադրությունը»[21]։

Ռուսական հեղափոխության մեջ բացառիկ նշանակություն էր ձեռք բերել ագրարային հարցը, որով պայմանավորվում էր երկրի սոցիալ-տնտեսական դարգացումը։ Ռուսաստանը գյուղացիական երկիր էր, իսկ հողային հարաբերությունների տիրապետող ձևերը խոչընդոտում էին տնտեսական նորմալ դարդացմանը։ «Բուրժուական տնտեսակարգը մեզ մոտ այն աստիճանի է դարդացել,— գրում էր Գ. Ղարաջյանը,— որ գոյություն ունեցող հողային հարաբերությունները սոսկալի արգելակ են դարձել այդ կարգի հետագա զարգացման համար։ Դրա հետևանքով կյանքը ինքն է համառորեն պահանջում երկրի զարգացող արտադրողական ուժերի ինտենսիվությանը համապատասխան՝ հողային հարաբերությունների, ամբողջ տնտեսակարգի փոփոխում»[22]։

Ագրարային հարցի լուծումը Գ. Ղարաջյանը կապում էր կալվածատիրական շղթաների մնացորդներից գյուղացիների լրիվ ազատագրման, ժողովրդի կողմից հողի ազատ տնօրինման, հողային հարաբերությունների կարգավորման հետ։ Ագրարային հարցը բնութագրելով որպես ժամանակակից բուրժուական հեղափոխության բուն էություն, Ղարաջյանը նրա լուծումը պայմանավորում էր այդ հեղափոխության ընթացքով։

Իր գործունեության սկզբնական շրջանում, պատկերացում չունենալով ագրարային հարցի մարքսիստական լուծման մասին, Գ. Ղարաջյանը գտնում էր, որ Անդրկովկասի տնտեսական գրությունը հնարավոր է բարձրացնել միայն գյուղատնտեսական ընկերություններ կազմակերպելու միջոցով։ Դա, ըստ նրա, հնարավորություն կտար հողագործության մեջ մտցնել արդյունաբերական նոր ձևեր, բարձրացնել գյուղատնտեսական մթերքների որակը և արտաքին շուկայում մրցել ուրիշ երկրների հետ։ Անդրկովկասի գյուղացիության աղքատության պատճառը Ղարաջյանը համարում էր ոչ այնքան սակավահողությունը, որքան հողագործության նահապետական, քիչ արդյունավետ եղանակների կիրառումը։

Կապիտալիզմը հեղափոխական ուղիով տապալելու տեսակետի վրա Գ. Ղարաջյանը կանգնեց ավելի ուշ՝ XX դ. սկզբին։

Հասարակության թշվառության պատճառը Գ. Ղարաջյանը համարում էր կապիտալիստական արտադրության և բաշխման եղանակը, մարդու կողմից մարդու շահագործումը, որը հետևանք էր արտադրության միջոցների մասնավոր սեփականության։ Աշխատավոր ժողովրդի թշվառությունը չի վերանա «քանի դեռ արտադրության և աշխատանքի միջոցները գտնվում են կապիտալիստների փոքրաթիվ դասակարգի տիրապետության տակ, ի վնաս հասարակության մնացած մասի, —գրում էր նա, —քանի դեռ մարդկային հասարա-

21 Նույն տեղում, էջ 1064։

22 С. Т. Аркомед, Рабочее движение и социал-демократия на Кавказе, стр. 131.

կությունը բաժանվում է շահագործողների և շահագործվողների, սեփականատերերի ու պրոլետարների»[23]։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ միջազգային բանվորական շարժման մեջ ծագեց սոցիալ-շովինիզմը։ Շովինիստական դիրքերում կանգնեց նաև Գ. Վ. Պլեխանովը՝ հանդես գալով իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան լոզունգի դեմ։ Լենինը այդ տակտիկան որակեց որպես սոցիալիզմի նկատմամբ մեծագույն դավաճանություն[24]։ Ի դեպ, պետք է նկատել, որ այս հարցում Գ. Ղարաջյանը չբաժանեց իր ուսուցչի՝ Պլեխանովի տեսակետը և կանգնեց մարքսիստական դիրքերի վրա։

Քննադատելով «հայրենիքի պաշտպանության» լոզունգը, Գ. Ղարաջյանը գտնում էր, որ պատերազմող խմբավորումների նպատակն է ընդարձակել ազդեցության ոլորտները, տիրապետել վաճառահանման նոր շուկաների, զավթել գաղութներ և շահագործել ժողովուրդներին։ Այստեղից սկսվում է «տընտեսական և քաղաքական գերիշխանությունը,— գրում է Ղարաջյանը,— մեկ երկրի հեգեմոնիան մյուսի վրա»[25]։

Գ. Ղարաջյանը մանրամասնորեն վերլուծում է իմպերիալիզմի քաղաքականության հետևանքները Անդրկովկասում։ Օտարերկրյա իմպերիալիզմի և տեղական, ազգային բուրժուազիայի ձգտումներին համապատասխան, Անդրկովկասը 1918 թ. անջատվեց Ռուսաստանից և վերածվեց երեք «անկախ» հանրապետությունների։ Այդ «անկախությունը» Ղարաջյանը համարում էր մեծ դժբախտություն, որի դառը պտուղները երկրամասի ժողովուրդները ճաշակեցին հաջորդ արյունալի տարիներին։

Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական-տնտեսական զարգացումը դարեր շարունակ տեղի է ունեցել համագործակցված հարաբերությունների պայմաններում։ Միավորված լինելով սոցիալ-տնտեսական և հոգևոր կապերով, նրանք միշտ միասին են կրել բոլոր մեծագույն դժվարությունները։ Միևնույն ժամանակ նրանք սերտ կապերի մեջ են եղել Ռուսաստանի հետ։ Այստեղից Գ. Ղարաջյանը եզրակացնում է, որ անդրկովկասյան ժողովուրդների փրկությունը ոչ միայն նրանց միասնության, այլև Ռուսաստանի հետ կապերի վերականգնման մեջ է։ Այդ առթիվ նա գրում էր. «Անդրկովկասյան բոլոր քաղաքացիների հայրենիքը Անդրկովկասն է, իսկ մեր բոլորի ընդհանուր հայրենիքը՝ դեմոկրատական մեծ Ռուսաստանը, Alma Mater հեղափոխությունը։ Ով որ չի ուզում դա հասկանալ ու ընդունել, նա անուղղելի եսասեր է, ազգայնական, ըստ գործածական արտահայտության՝ ողորմելի «մորթապաշտ», որի տեղը ոչ թե 20-րդ դարի սոցիալական միջավայրն է, այլ միջին դարերի վաղուց անցած ժամանակաշրջանները»[26]։

Անդրկովկասի բուրժուա-ազգայնական կուսակցությունների գաղափարախոսները փորձում էին երկրամասի մասնատման փաստն արդարացնել ժողովուրդների անկախության և ինքնուրույնության ձգտումների առկայությամբ։ Գ. Ղարաջյանը ցույց է տալիս, որ նախ՝ «անկախություն» հռչակե-

---

23 ՍՄԿԿ կից Մլի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 51, ց. 1, գ. 77, թ. 24։

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 350։

25 ՍՄԿԿ կից Մլի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 51, ց. 1, գ. 77, թ. 21։

26 С. Т. Аркомед, Рабочее движение и социал-демократия на Кавказе, стр. 14.

լիս բոլորովին հաշվի չառնվեց կովկասյան ժողովուրդների կամքը և, երկրորդ՝ «մենք ժողովուրդների քաղաքական լրիվ անկախության կողմնակից ենք միայն այն դեպքում, երբ այն չի հանդիսանում ժողովրդի զարգացման արգելք և համապատասխանում է բանվորական դեմոկրատիայի շահերին»[27]։ Մինչդեռ անդրկովկասյան հանրապետությունների «անկախությունը» այդ պահանջներին հակասում էր։

Ժողովրդին մոլորեցնելու նպատակով Անդրկովկասի ազգայնական կուսակցությունների ղեկավարները հայտարարում էին, թե իրենք մարքսիստներ են։ Մերկացնելով այդ կեղծիքը, Գ. Ղարաջյանը գրում էր. «Մարքսիստ լինել նշանակում է հիմնովին ընդգրկել մարքսիզմի սոցիալ-փիլիսոփայությունը և այդ փիլիսոփայությունը կյանքի մեջ, ժողովուրդների կյանքի բազմազան պայմանների մեջ կիրառելու մեթոդոլոգիան»[28]։

Պրոլետարական հեղափոխությունը Գ. Ղարաջյանը համարում էր ժողովուրդների փրկության միակ ելքը։ Սակայն կանգնած լինելով մենշևիզմի դիրքերում, նա հաճախ փաստորեն անտեսում էր բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հեղափոխական դաշինքի դերը։ «Գյուղացիությունը,— կրկնելով Պլեխանովի սխալը, գրում էր նա, —իր ընդհանուր կազմով սոցիալիզմի կողմնակից չէ»[29]։ Բայց այս հարցում ևս Գ. Ղարաջյանը երբեմն առաջ է անցնում իր ուսուցչից՝ գտնելով, որ «գյուղացիական շարժումը իր ներքին բովանդակությամբ ու բնույթով մանրբուրժուական, դեմոկրատական է. այնուամենայնիվ հեղափոխական ժամանակաշրջանում այն կարող է ուժեղ ազդեցություն գործել սոցիալ-դեմոկրատական մինիմում ծրագրի իրականացման վրա»[30]։

Իր հեղափոխական գործունեությամբ Գ. Ղարաջյանը ձգտում էր օգտակար լինել աշխատավորական զանգվածներին. «Salus populi Suprema lex» (Ժողովրդի բարիքը գերագույն օրենք է),—գրում էր նա հեղափոխականի իր հիշատակարանում,— ահա այն դևիզը, որին աշխատել եմ անշեղ հետևելու»[31]։ Բայց այդ բարի նպատակին ձգտելու ճանապարհին Ղարաջյանը թույլ տվեց մի շարք վրիպումներ ու կոպիտ սխալներ։ Հետագայում հիշելով այդ մասին, նա խոստովանում էր. «Ոչ ոք չկարծե, թե ես այնպիսի հավակնոտ անձերից եմ, որ ասեմ ու պնդեմ, թե ես սխալներ չեմ ունեցել իմ գործունեության ընթացքում»[32]։

Գնահատելով Գ. Վ. Պլեխանովի տեսական ժառանգությունը, Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ մարքսիզմի հիմնական հարցերում «նա հավատարիմ էր մնում իրեն»[33]։ Նույնն, առանց վերապահության, կարելի է ասել նաև Գևորգ Ղարաջյանի մասին։

---

27 ՍՄԿԿ ԿԿ կից Մարքսի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 51, ց. 1, գ. 48, թ. 51։
28 Նույն տեղում, ֆ. 51, ց. 1, գ. 90, 46։
29 Նույն տեղում, գ. 47, թ. 1։
30 С. Т. Аркомед, Рабочее движение и социал-демократия на Кавказе. стр. 139
31 ՍՄԿԿ ԿԿ կից Մարքսի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 51, ց. 1, գ. 93, թ. 2։
32 Նույն տեղում, թ. 3։
33 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 16, էջ 332։

ЭКОНОМИЧЕСКИЕ ВОЗЗРЕНИЯ Г. КАРАДЖАНА (С. Т. АРКОМЕДА)

М. А. ГРИГОРЯН

Резюме

Георгий Артемьевич Караджан (С. Т. Аркомед) принадлежит старейшему поколению армянских революционеров. В его трудах анализируется социально-экономическая жизнь Закавказья периода капитализма. Он подробно исследует характер производительных сил и производственных отношений, вопросы соотношения общественных классов, производства, распределения материальных благ, а также другие экономические проблемы. Автор часто проводит аналогии из области развития капитализма в западной Европе и центральной России, при этом каждому экономическому явлению он дает свою оценку, предлагая программу революционной борьбы освобождения трудящихся Закавказья от капиталистической эксплуатации.

Главный труд Г. Караджана — «Рабочее движение и социал-демократия на Кавказе» был высоко оценен В. И. Лениным. В 1910 г. в газате «Социал-демократ» (№ 15—16) об этом труде В. И. Ленин писал: «Приветствуем появление этой брошюры, содержащей много фактического материала и заслуживающей самого широкого распространения».

Однако в некоторых вопросах Г. Караджан допустил ошибки и оказался в лагере меньшевизма. Позже он признал свои ошибки, а с установлением Советской власти в Закавказье преданно служил большевистской партии.